Մենք և Մեր Իրավունքները

ԼԳԲՏ անձանց հանդեպ հանրային վերաբերմունքը Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում

2011

«ՍՈՑԻՈՍԿՈՊ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Եկմալյան 6, 3 հարկ, 7,8 սենյակ
Երևան 0002, Հայաստան
Հեռ + 374 10 500 499
Է-փոստ info@socioscope.am

«ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ԵՎ ԳԻՏԵԼԻՔԻ ԿԱՐԻՔ» ՀԿ

Հեռ + 374 60 377 277
Է-փոստ info@pinkarmenia.org
Կայք www.pinkarmenia.org

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ **3**

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ **4**

ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ **6**

ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՍԱԿԵՏ 6

ԼԳԲՏ ԱՆՁԻՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 7

ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՍԵՌԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ 7

ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ **9**

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄՈԴԵԼ. ՑՈՒՑԻՉՆԵՐ 10

ԳԻՏԵԼԻՔ 10

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ 13

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ 16

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ 17

ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՀԱՆԴԵՊ ՏԱՐՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ **20**

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ **22**

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱՁԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱՁՄԱԿԵՐՊՈՒՄ 23

ԱՇԽԱՏԱՆՔ ՁԼՄ-ՆԵՐԻ ՀԵՏ 24

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ **25**

ՀԱՎԵԼՎԱԾ 1 **25**

ՀԱՎԵԼՎԱԾ 2 **38**

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԳԲՏ	Լեսբուհի (կին նույնասեռական), գեյ (տղամարդ նույնասեռական), բիսեքսուալ (երկսեռական), տրանսգենդեր (գենդերափոխ)
Սեռական կողմնորոշում	Յուրաքանչյուր անձի զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակումը որոշակի սեռի այլ անձի հանդեպ
Նույնասեռական (հոմոսեքսուալ)	Անձ, որին բնորոշ է զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակում նույն սեռի այլ անձի նկատմամբ
Տարասեռական (հետերոսեքսուալ)	Անձ, որին բնորոշ է զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակում հակառակ սեռի այլ անձի նկատմամբ
Երկսեռական (բիսեքսուալ)	Անձ, որին բնորոշ է զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակում ինչպես նույն, այնպես էլ հակառակ սեռի այլ անձի նկատմամբ
Գենդերային ինքնություն	Յուրաքանչյուր անձի ներքին և անհատական ընկալումը այն դերերի, վարքի, գործողություն-ների վերաբերյալ, որը հասարակության կողմից բնորոշվում է կնոջը և տղամարդուն: Անձի գենդերային ինքնությունը կարող է տարբերվել այն սեռից, որը որոշվում է ծծնդի պահին
Գենդերափոխ (տրանսգենդեր)	Անձ, որի ինքնությունը տարբերվում է իր կենսաբանական սեռին բնորոշ դերերի, վարքի, գործողությունների վերաբերյալ հասարակության մեջ գոյություն ունեցող կարծրատիպային սպասումներից

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«ԼԳԲՏ անձանց հանդեպ հանրային վերաբերմունքը Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում. 2011» հետազոտությունը քանակական սոցիոլոգիական հետազոտություն է, որի կենտրոնում հետևյալ հիմնահարցերի վերաբերյալ քանակական տվյալների հավաքագրումն է և վերլուծությունը.

- խոցելի խմբերը Հայաստանում,
- տեղեկացվածություն ԼԳԲՏ անձանց մասին,
- վերաբերմունք/դիրքորոշում ԼԳԲՏ անձանց հանդեպ:

Ընդհանուր առմամբ իրականացվել է 1156 հարցազրույց Երևանում, Գյումրիում և Վանաձորում:

Գյումրի	384
Վանաձոր	387
Երևան	385
Ընդհանուր	1156

Հետազոտությունը հիմնված է եղել քվոտային ընտրանքի վրա: Ստորև ներկայացված է յուրաքանչյուր քաղաքում հարցվողների քանակը՝ ըստ սեռատարիքային բաշխվածության:

Աղյուսակ 1	Գյումրի		Երևան		Վանաձոր	
	Արական	Իգական	Արական	Իգական	Արական	Իգական
18-29	47	45	52	57	50	47
30-39	39	39	32	40	36	41
40-49	41	45	39	45	42	48
50-64	37	38	32	42	37	42
65 և ավել	22	31	17	29	22	22
Ընդամենը	186	198	172	213	187	200

Իրավիճակը նկարագրելու նպատակով օգտագործվել է տեղեկատվության հավաքագրման կիսաձևայնացված հարցա-զրույցների մեթոդը, որի դեպքում հարցվողները հարցերի առաջադրված պատասխանների տարբերակներից ընտրել են իրենց համար ընդունելիները, ինչպես նաև եղել են բաց հարցեր, որոնց պատասխանները առաջադրել են հարցվողները:

Հարցաթերթում հարցերը կազմվել են ոչ թե համաձայն ժամանակակից գիտական դիսկուրսի, այլ համապատասխան այն դիսկուրսի, որ կիսում և հասկանում է այսօր հայ հասարակությունը՝ այն հնարավորինս ընկալելի դարձնելու և հաղորդակցական կոնֆլիկտից խուսափելու համար:

Հետազոտության ընթացքում օգտագործված հարցաթերթի, հարցազրուցավարներին տրված հրահանգների և երթուղային թերթի օրինակները հասանելի են սույն հրատարակության էլեկտրոնային տարբերակում, որը տեղադրված է «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ պաշտոնական կայքի «Հրատարակումներ» բաժնում՝ **www.pinkarmenia.org**:

ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՄԱՍԻՆ

Հարցվողներն առանձնացրել են սոցիալական խմբեր, որոնք իրենց կարծիքով խոցելի են այսօր: Այնուհետև, նրանք գնահատել են, թե որքանով են իրենք տեղյակ ԼԳԲՏ անձանց մասին, անդրադարձել են տեղեկատվության հիմնական աղբյուրներին, ինչպես նաև կազմակերպություններին, որոնք զբաղվում են ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությամբ կամ, ըստ իրենց, պայքարում նրանց դեմ: Հարցվողները իրենց տեսակետն են հայտնել նաև ԼԳԲՏ անձանց հանդեպ պետության և ՁԼՄ-ների վարած քաղաքակա-նության վերաբերյալ:

ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՍԱԿԵՏ

Ինչպես երևում է Աղյուսակ 2-ից, հարցվողների հիմնական մասը՝ **31.3%,** որպես խոցելի խումբ առանձնացնում է հաշմանդամություն ունեցող անձանց: Մյուս համեմատաբար մեծ խումբը, որը ևս հարցվողների կարծիքով խոցելի է, ծերերն ու թոշակառուներն են՝ **24.8%:** Ինչպես տեսնում ենք, ԼԳԲՏ անձիք դիտարկվում են որպես խոցելի խումբ հարցվողների **6.3%** կողմից:

Աղյուսակ 2	N	Տոկոս
Հաշմանդամություն ունեցող անձիք	855	31.3
ԼԳԲՏ անձիք	173	6.3
էթնիկ փոքրամասնություններ	151	5.5
Երեխաներ	495	18.1
Կանայք	299	10.9
Ծերեր/թոշակառուներ	678	24.8
Այլ	71	2.50
Դժվարանում եմ պատասխանել	11	0.4
Ընդամենը	2733	100.0

ԼԳԲՏ ԱՆՁԻՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հարցվողներն իրենց կարծիքն են հայտնել այն մասին, թե արդյոք Հայաստանում կան ԼԳԲՏ անձիք: Հարցվողների մեծամասնությունը՝ **37.2%,** կարծում է, որ նրանք այնքան էլ շատ չեն: Ընդ որում, եթե դիտարկենք ըստ քաղաքների (Երևան, Գյումրի, Վանաձոր), ապա Երևանում ամենաշատն են կարծում, որ, այնուամենայնիվ, Հայաստանում կան ԼԳԲՏ անձիք՝ **44.6%: Վանաձորում, մնացած երկու քաղաքների հետ համեմատ, մեծ տոկոս են կազմում այն հարցվողները, ովքեր կարծում են, որ այս սոցիալական խմբին պատկանող անձիք ընդհանրապես չկան՝ 5.1%:**

Աղյուսակ 3	Երևան	Գյումրի	Վանաձոր	Ընդամենը
Այո, շատ են	44.6%	26.9%	28.6%	33.6%
Այնքան էլ շատ չեն	32.3%	37.9%	42.2%	37.2%
Քիչ են	22.0%	33.8%	24.1%	26.7%
Ընդհանրապես չկան	1.1%	1.4%	5.1%	2.4%
	100.0%	100.0%	100.0%	100.0%

ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՍԵՌԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ

Ինչպես երևում է Աղյուսակ 4-ից, հարցվողների մեծամասնությունը կարծում է, որ ԼԳԲՏ անձանց կազմում ավելի շատ են տղամարդիկ՝ **49.5%:** Հետաքրքիր է, որ Գյումրիում հարցվածների մեծամասնությունը՝ **49.4%,** կարծում է, որ ԼԳԲՏ անձանց կազմում ավելի շատ են կանայք (Աղյուսակ 5):

Աղյուսակ 4	Հաճախականություն	Տոկոս
Ավելի շատ տղամարդիկ	515	49.5
Ավելի շատ կանայք	168	16.1
Երկու սեռից էլ հավասարապես	358	34.4
Ընդամենը	1041	100.0

Աղյուսակ 5	Երևան	Գյումրի	Վանաձոր	Ընդամենը
Ավելի շատ տղամարդիկ	41.9%	28.7%	29.3%	100.0%
Ավելի շատ կանայք	29.8%	49.4%	20.8%	100.0%
Երկու սեռից էլ հավասարապես	27.1%	37.2%	35.8%	100.0%
Ընդամենը	34.9%	35.0%	30.2%	100.0%

ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՆՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ



ԼԳԲՏ անձանց նկատմամբ առկա հանրային վերաբերմունքի ու ընկալման փոփոխության հնարավորությունները դիտարկենք սոցիալական վարքի փոփոխման մոդելի շրջանակներում: Սոցիալական վարքի փոփոխության մոդելը ներկայացնում է *գիտելիքից, վերաբերմունքից, դիրքորոշումից և գործողությունից* բաղկացած կոմպոնենտների խիստ աստիճանակարգված կառուցվածք, որտեղ նրանցից յուրաքանչյուրը ձևավորվում և բխում է համապատասխան նախորդի: Փոփոխության առաջին աստիճանը առկա երևույթի մասին տեղեկատվության տրամադրումն է և դրա շուրջ ճշգրիտ գիտելիքի կառուցումը, որի նկատմամբ հետաքրքրությունը ձևավորում է որոշակի վերաբերմունք:

Կախված ձևավորած դրական կամ բացասական վերաբերմունքից՝ անհատը ձեռք է բերում դիրքորոշում, որի համապատասխան էլ նա գործում և կողմնորոշվում է սոցիալական իրավիճակներում:

Ինչպես ցույց են տալիս մեր հետազոտության արդյունքները, ԼԳԲՏ անձանց նկատմամբ առկա հանրային ընկալումն ու վերաբերմունքը անհանդուրժողական է, ինչը արտացոլված է ներքոնշյալ յուրաքանչյուր բաղադրիչում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԱՐՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՄՈԴԵԼ. ՑՈՒՑԻՉՆԵՐ

- Հիվանդություն է **18.6%**
- Արևմտյան երկրների բացասական ազդեցությունն է **12.7%**
- Դաստիարակության արդյունք է **10.8%**

- Բացասական վերաբերմունք **72,1%**
- Վիրավորանք-հայհոյանք **27,4 %**
- Անձնային բացասական պիտակներ **17.7%**

- Հասարակությունը պետք է դատապարտի ԼԳԲՏ անձանց **66,9 %**
- ԼԳԲՏ անձ լինելը հարիր չէ հայ ազգին **52.7%**
- Տարօրինակ մարդիկ են **70,9%**
- Շեղում է **97,4%**

- Կդադարեցնեմ շփումը **55,3%**

ԳԻՏԵԼԻՔ

Հարցվողների շրջանում ԼԳԲՏ անձանց մասին ունեցած գիտելիքը կարծրատիպային է և դուրս գիտական բացատրությունների շրջանակից: Հարցվողները «ոչ ավանդական» սեռական կողմնորոշում ունենալը դիտարկում են որպես *հիվանդություն* (**18.6%**), *արևմտյան երկրների բացասական ազդեցություն* (**12.7%**), *դաստիարակության հետևանք* (**10.8%**), անգամ **9.9%-ը** դա համարում է ժամանակակից պայմաններում համացանցով շփման արդյունք:

Աղյուսակ 6	N	%
Հիվանդություն է	478	**18.6**
Արևմտյան երկրների բացասական ազդեցության հետևանքն է	326	**12.7**
Դաստիարակության արդյունք է	278	**10.8**
Ժամանակակից պայմաններում համացանցով շփման արդյունք է	255	**9.9**
Ձեռքբերովի է	249	**9.7**
Հորմոնների և քրոմոսոմների թվով է պայմանավորված/գենետիկա	224	**8.7**

Նոր բարքերի, ազատության քարոզչության արդյունք է	200	**7.8**
Բնությունն է այդպես ստեղծել	107	**4.2**
Գիտության մեջ վերջնական բացատրություն չկա	97	**3.8**
Այդ կերպ նրանք փորձում են տարբերվել/ուշադրություն գրավել	85	**3.3**
Աստծո պատիժ է	75	**2.9**
Մոդա է	70	**2.7**
Մարդկանց հանդուրժող վերաբերմունքի արդյունքն է	54	**2.1**
Ցանկացած մարդու իրավունքն է՝ ազատորեն տնօրինելու իր անձնական կյանքը	47	**1.8**
Սոցիալապես անապահով վիճակի արդյունք է	16	**0.6**
Կախված է ծնողների առողջական վիճակից	13	**0.5**
Ընդամենը	2574	**100**

Արական սեռի ներկայացուցիչները ավելի շատ են բնութագրում կին նույնասեռականներին վիրավորանք-հայհոյանքով՝ **33.2%:** Մինչդեռ իգական սեռի հարցվողները առավել հաճախ բնութագրում են անձնային բացասական պիտակներով՝ **18.8%:**
Չնայած այս հանգամանքին՝ հարցվողների **80,5%-ը** պատասխանել է, որ ինքը գիտի, թե ինչ է նույնասեռականությունը:

Առավել տեղեկացվածներ

- 18-29 տարեկան
- Բարձրագույն կրթությամբ
- Երևանաբնակ

Սակավ տեղեկացվածներ

- 65 և ավել տարեկան
- Միջնակարգ կրթությամբ
- Վանաձորաբնակ

Մինչդեռ գենդերափոխների և երկսեռականների մասին տեղեկացված են ոչ բոլորը (առաջինի դեպքում 26,3%-ը, երկրորդի դեպքում՝ 37,4%-ը): Ստացվում է, որ **հարցվողների մոտ սեռական**

կողմնորոշման և գենդերային ինքնության մասին պատկերացումները սահմանափակվում են միայն նույնասեռականության մասին ընդհանուր պատկերացումների շրջանակով, որն ինքնին հիմնված է կարծրատիպային գիտելիքի վրա:

Հարցվողները ԼԳԲՏ անձանց մասին տեղեկատվություն են ստանում հեռուստատեսությունից. ժամանցային ծրագրերից, հաղորդումներից՝ **31%** և **22.6%**՝ տեղեկատվական հաղորդումներից:

53.6%

Տեղեկատվություն ԼԳԲՏ անձանց մասին

Հետաքրքիր է, որ համացանցը ընդհանուր առմամբ որպես տեղեկատվության աղբյուր հանդես է գալիս հարցվողների ընդամենը 15%-ի համար:

Աղյուսակ 7	N	Տոկոս
Հեռուստատեսություն (տեղեկատվական)	480	22.6%
Հեռուստատեսություն (ժամանցային)	659	31.0%
Համացանցից (լրատվական)	106	5.0%
Համացանցից (ժամանցային/սոցիալական ցանցեր)	213	10.0%
Տպագիր մամուլ (տեղեկատվական)	72	3.4%
Տպագիր մամուլ (ժամանցային)	72	3.4%
Հարևան/ծանոթ/ընկեր	415	19.5%
Այլ	108	5.10%
Ընդամենը	2125	100.0%

Հարցվողների **20.5%-ն** է միայն անձամբ ճանաչում ԼԳԲՏ անձ, որոնց կեսը կարծում է, որ նրանք իր համաքաղաքացիներն են:

Աղյուսակ 8 . Ովքե՞ր են նրանք	Հաճախակա- նություն	Տոկոս
Համաքաղաքացի է	112	**50.7**
Պարզապես ծանոթներ ենք	47	**21.3**
Միասին աշխատում ենք/սովորում ենք	20	**9.0**
Միևնույն բակից/թաղամասից ենք	19	**8.6**
Նա/նրանք իմ հարևանն է/են	7	**3.2**
Ընկերներ ենք	6	**2.7**
Բարեկամ ենք	6	**2.7**
Քաղաքական գործիչ է	4	**1.8**
Ընդամենը	221	**100.0**

Տարիքային խմբերում ԼԳԲՏ անձ անձամբ ճանաչում են 18-29 **(38.1%)** տարեկանները: Ամենափոքր խումբը 40-49 տարեկաններն են **(23.3%):** Ավելի շատ ԼԳԲՏ անձանց անձամբ ճանաչում են մասնավոր ոլորտի աշխատողները՝ համեմատած մյուս ոլորտների հետ **(21.3%):** Գյումրի քաղաքում հարցվողների ընդամենը 17.8%-ն է ճանաչում ԼԳԲՏ անձանց: Երևանում և Վանաձորում՝ համապատասխանաբար հարցվածների **41.9%** և **40.3%-ը:**

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

ԼԳԲՏ անձանց նկատմամբ վերաբերմունքը դուրս է բերվել ինչպես հարցվողների կողմից նրանց տրվող բնութագրական հատկա-նիշների, այնպես էլ շփման հնարավորությունների հիման վրա:
ԼԳԲՏ անձանց բնութագրող հատկանիշները ընդհանրացված են հետևյալ խմբերում.

- վիրավորանք-հայհոյանք,
- գենդերային դերերին բնորոշ տարբեր հատկանիշներ,
- գաղափարախոսական և արժեքային խմբերի պատկանե-լիություն,
- արտաքին տեսք:

Հարցվողների **27.4%-ը** ***վիրավորանք-հայհոյանքով***, իսկ **17.7%-ը** ***անձնային բացասական պիտակներով*** է բնութագրել ԼԳԲՏ անձանց:
Հարցվողների միայն **11.5%-ն** է հանդուրժող և դրական որակներով բնութագրել, իսկ **2.9%-ն** անգամ կարեկցական արտահայտություններով է հանդես եկել:
Եթե դասակարգենք վերագրվող հատկանիշները ըստ «հանդուրժող-անհանդուրժող» հիմքի, ապա ԼԳԲՏ անձիք առավելապես բնութագրվում են անհանդուրժողականություն պարունակող բնութագրիչներով:



Պարզվում է, որ ԼԳԲՏ անձանց հետ չշփվելու պատճառը նրանց նկատմամբ **72.1%** հարցվողների բացասական վերաբերմունքն է, անգամ եթե նրանք իրենց ընկերներն են կամ բարեկամները:

Աղյուսակ 9. *Ինչու՞ պատրաստ չեք շփում ունենալ ԼԳԲՏ անձանց հետ*	**Հաճախա-կանություն**	**Տոկոս**
Բացասական եմ վերաբերվում նրանց	689	72.1
Անհանգստանում եմ, թե ինչ կմտածի իմ շրջապատը իմ մասին	104	10.9
Կարծում եմ, որ ԼԳԲՏ անձ լինելը դատապարտելի է	61	6.4
Փորձում եմ դրանով այնպես անել, որ այդ երևույթը չտարածվի	101	10.6
Ընդամենը	955	100.0

Ինչպես երևում է աղյուսակ 10-ից, հարցվողների համար ընկերոջ կամ բարեկամի և ՀՀ եկած տուրիստի նկատմամբ ունեցած սոցիալական տարածության տարբերությունը էական դեր չի խաղում նրանց հետ շփման դադարեցման կամ բացակայության հարցում:

Աղյուսակ 10 . *Կշփվե՞ք, եթե իմանաք, որ ԼԳԲՏ անձը Ձեր*	%	%
	Այո	Ոչ
Ընկերն է	21.9	78.1
Բարեկամն է	28.2	71.8
Թաղամասի բնակիչ է	19.6	80.4
Աշխատակիցն է	23.3	76.7
Համաքաղաքացին է	18.3	81.7
ՀՀ եկած տուրիստ է	16.7	83.3

ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրենց վերաբերմունքն են արտահայտել հարցվողների **87.6%-ը**, որոնք նշել են, որ չեն օգտվի այն սպասքից, որից նախկինում օգտվել է ԼԳԲՏ անձ: Սակայն նկատելի տարբերություն կա կին և տղամարդ հարցվողների պատասխանների միջև: Կանանց **72.1%-ը** խնդիր չի տեսնում ԼԳԲՏ անձի կողմից նախկինում օգտագործած սպասքից օգտվելու մեջ:

Աղյուսակ 11	**Արական**	**Իգական**	**Ընդամենը**
Այո	27.9%	72.1%	100.0%
Ոչ	49.0%	51.0%	100.0%
Ընդամենը	46.4%	53.6%	100.0%

Ընդ որում, կրթությունը ևս ազդում է: Օրինակ, նրանք, ովքեր կօգտագործեն նման սպասք, ավելի շատ բարձրագույն կրթությամբ հարցվողների խմբին են պատկանում: Քաղաքներում ևս պատկերը տարբերվում է. **Երևանում** կօգտվեն այդպիսի սպասքից հարցվողների **50%-ը**, **Գյումրիում՝ 24.3%-ը**, իսկ **Վանաձորում՝ 25.7%-ը:**

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ԼԳԲՏ անձանց նկատմամբ հարցվողների դիրքորոշումը դուրս է բերվել երկու հակադիր դատողություններից մեկի նախապատվության արդյունքում: Ինչպես տեսնում ենք, հարցվողներն առավել հակված են այն դիրքորոշմանը, որ ԼԳԲՏ անձիք տարօրինակ մարդիկ են, իսկ այդ երևույթը շեղում է, և պետք է դատավպարտվի հասարակության կողմից:





Հարցվողների մեծամասնության համար ԼԳԲՏ անձ լինելը կապված է նաև ազգային պատկանելության հետ, ըստ այդմ, հայ ազգին հարիր չէ ունենալ ԼԳԲՏ անձիք իր շարքերում՝ **52.7%:**
Հարցվողների 66.9%-ի համար ԼԳԲՏ անձիք պետք է դատապարտվեն հասարակության կողմից: Առավել հանդուրժող են կին հարցվողները, ովքեր ավելի շատ են կարծում, որ հասարակությունը պետք է հանդուրժող լինի նրանց նկատմամբ: Բարձրագույն կրթությամբ հարցվողները ևս ցուցաբերում են ավելի մեծ հանդուրժողականություն, քան, օրինակ, միջնակարգ կրթությամբ հարցվողները: **Գյումրիում (35.7%)**, ի տարբերություն մյուս երկու քաղաքների **(Երևան՝ 34.3%, Վանաձոր՝ 29.9%)**, ավելի մեծ տոկոս է կազմում այն կարծիքը, որ հասարակությունը պետք է լինի ավելի հանդուրժող:

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

ԼԳԲՏ անձանց հանդեպ անհանդուրժող վերաբերմունքն ու դիրքորոշումը հարցվողներին հետ է պահում նրանց հետ ունեցած շփումից: Նրանց **55.3%**-ը ուղղակի կդադարեցնի շփումը, եթե իմանա, որ իր ծանոթը, ընկերը կամ բարեկամը ԼԳԲՏ անձ է, **23.8%**-ը կփորձի ազդել նրա վրա սեռական կողմնորոշումը փոխելու նպատակով, իսկ ահա **13.2%**-ի համար այդ շփումը բացասական կլինի: **Միայն 6.7%-ի համար ԼԳԲՏ անձ լինելու հանգամանքը էական նշանակություն չունի նախկինում ունեցած հարաբերությունների հարցում:**

Աղյուսակ 12. *Ինչպե՞ս կվարվեք, եթե իմանաք, որ Ձեր ծանոթը/ընկերը/բարեկամը ԼԳԲՏ անձ է*	*Հաճախա-կանություն*	*Տոկոս*
Կդադարեցնեմ շփումը նրա հետ	619	55.3
Կշարունակեմ շփվել այնպես, ինչպես նախկինում էի շփվում	75	6.7
Կշարունակեմ շփումը, սակայն այն արդեն բացասական կլինի	148	13.2
Կփորձեմ ազդել նրա վրա, որպեսզի փոխի իր սեռական կողմնորոշումը	267	23.8
Այլ	11	1.0
Ընդամենը	1120	100.0

Կրիտիկական իրավիճակներում ԼԳԲՏ անձանց նկատմամբ ուղղված իրենց գործողություններում հարցվողներն առավելապես անտարբեր են: Հարցին՝ ինչպես կվարվեք, եթե տեսնեք, որ բռնության են ենթարկում նույնասեռական կնոջ և տղամարդու, երկու դեպքում էլ հարցվողները մեծամասամբ պատասխանել են, որ անտարբեր կանցնեն, կգնան, սակայն կմտածեն, որ սխալ են վարվում: Նման իրավիճակներում նույնասեռական կնոջն ավելի շատ են հակված օգնելու (**28.9%**), քան տղամարդուն (**15.2%**), իսկ բռնություն կիրառողներին միանալուն ավելի շատ պատրաստ են տղամարդ նույնասեռականների դեպքում, քան կին:

Նման իրավիճակներում՝ կին նույսաեռականին բռնության ենթարկելու դեպքում, իրավապահ մարմինների օգնությանը պատրաստ են դիմել հարցվողների **12.4%**, իսկ տղամարդ նույնասեռականի դեպքում՝ **13%**-ը:

Կին նույնասեռական	Տղամարդ նույնասեռական
Անտարբեր կանցնեմ, կգնամ, բայց կմտածեմ, որ սխալ են վարվում **35.3%**	Անտարբեր կանցնեմ, կգնամ, բայց կմտածեմ, որ սխալ են վարվում **38.4%**
Անտարբեր կանցնեմ, կգնամ, բայց կմտածեմ, որ ճիշտ են վարվում **20.6%**	Անտարբեր կանցնեմ, կգնամ, բայց կմտածեմ, որ ճիշտ են վարվում **28%**
Կմոտենամ և կփորձեմ օգնել **28.9%**	Կմոտենամ և կփորձեմ օգնել **15.2%**
Կզանգեմ իրավապահ մարմիններին **12.4%**	Կզանգեմ իրավապահ մարմիններին **13%**
Կմիանամ բռնություն կիրառողներին **2.1%**	Կմիանամ բռնություն կիրառողներին **4.4%**

Ընդհանուր առմամբ կարելի է պնդել, որ.

- **ամենատեղեկացվածները և ամենահանդուրժողները 18-30տ. երևանաբնակ երիտասարդներն են,**
- **կանայք առավել հանդուրժող են, քան տղամարդիկ:**

ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԸ ԼԳԲՏ ԱՆՁԱՆՑ ՀԱՆԴԵՊ ՏԱՐՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐ

ԼԳԲՏ անձանց հանդեպ պետական ինստիտուտների դերակատարման մասին հարցվողների դիրքորոշումը ներկայացված է ստորև: **Հարցվողների 74.5%-ի համոզմամբ պետությունն իրականում ոչինչ չի անում ԼԳԲՏ անձանց նկատմամբ տարվող իր քաղաքականության մեջ, ուստի 71.5%-ը կարծում է, որ պետությունն այդ բացը պետք է լրացնի նրանց դեմ պայքարելու միջոցով:**

Ի՞նչ է անում պետությունը	Ի՞նչ պետք է անի պետությունը
• Ոչինչ չի անում **74.5%**	• Պայքարի նրանց դեմ **71.5%**

Ընդամենը **2.8%**-ն է կարծում, որ պետությունը պետք է մշակի հասարակական իրազեկվածության բարձրացման ծրագրեր: Հետաքրքիր է, որ տղամարդկանց **48%**-ն է կարծում, որ պետությունը պետք է պայքարի նրանց դեմ, մինչդեռ կանանց՝ **52%**-ը: Որպես առավել հանդուրժող խումբ կարելի է առանձնացնել **18-29 տարեկաններին**, որոնց **34.1%**-ը կարծում է, որ պետք է պաշտպանի նրանց իրավունքները և նրանց **29%**-ը կարծում է, որ պետությունը պարտավոր է մշակել իրազեկման ծրագրեր: **40-49 տարեկան** խմբի պատկանող հարցվողները համեմատաբար ոչ հանդուրժող են: Նրանց **22.4%**-ը կարծում է, որ պետությունը պետք է պայքարի նրանց դեմ: Երեք քաղաքների համեմատությամբ Գյումրիում համե-մատաբար ավելի շատ է տարածված կարծիքը, որ պետությունը պետք է պայքարի ԼԳԲՏ անձանց դեմ՝ **36%**, մինչդեռ Երևանում և Վանաձորում՝ համապատասխանաբար **31.5%** և **32.5%:**

Թեև ԼԳԲՏ անձանց դեմ պայքարելու պետական քայլերի նախաձեռնման ցանկությանը՝ հարցվողների **75.4%**-ը գտնում է, որ նրանք ունեն նույն իրավունքները, ինչ մյուսները, իսկ **53.4%**-ի կարծիքով նրանց իրավունքները պետք է հավասարապես պաշտպանվեն, այլ ոչ թե ոտնահարվեն: Այս առումով հարցվողների ընդամենը **7.3%**-ն է մտաբերել այն կառույցներն ու կազմակերպությունները, որոնք զբաղվում են ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությամբ, որոնց շարքում են պետությունն իր օրենսդիր և գործադիր մարմիններով, միջազգային կազմակերպությունները, մարդու իրավուքների պաշտպանն ու ոստիկանությունը: Ավելի մեծ տոկոս են կազմում այն հարցվողները (**9.3%**), որոնք գիտեն ԼԳԲՏ անձանց դեմ պայքարող կազմակերպություններ: Դրանց շարքում են ազգայնական կազմակերպությունները, ոստիկանությունն ու եկեղեցին:
Ուշագրավ է այն, որ հարցվողները ոստիկանությանը առավել շատ դիտարկում են ոչ թե որպես իրավապահ, այլ մարդու իրավունքների դեմ պայքարող մարմին:

7.3%

ԼԳԲՏ անձանց իրավունքները պաշտպանող կառույց

- Պետություն, ԱԺ, կառավարություն՝ ***7 հոգի***
- Միջազգային կազմակերպություններ՝ ***6 հոգի***
- Մարդու իրավունքների պաշտպան՝ ***5 հոգի***
- Ոստիկանություն՝ ***3 հոգի***

9.3%

ԼԳԲՏ անձանց դեմ պայքարող կառույց

- Ազգայնական կազմակերպություններ՝ ***14 հոգի***
- Ոստիկանություն՝ ***10 հոգի***
- Եկեղեցի՝ ***8 հոգի***

1127 մարդ չգիտի որևէ կազմակերպություն, որը զբաղվում է ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությամբ, իսկ 1113 մարդ չգիտի նրանց դեմ պայքարող կազմակերպություն:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմք ընդունելով **«ԼԳԲՏ անձանց հանդեպ հանրային վերաբերմունքը Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում. 2011»** սոցիոլոգիական հարցման տվյալները՝ իրականացնող կազմակերպությունները մշակել են առաջարկությունների փաթեթ՝ ուղղված.

- ՀՀ կառավարությանը,
- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտին,
- տեղական և միջազգային ոչ կառավարական կազմակերպություններին:

Հայաստանը հռչակված է որպես ժողովրդավար պետություն, որի հիմնական ուղենիշը լիբերալ արժեքների ինստիտուցիոնալիզացիան և կիրարկումն է, ուստի պետությունը և շահագրգիռ բոլոր կազմակերպություններն ու միությունները, գործելով ՀՀ սահմանադրության շրջանակներում, պետք է հնարավորինս նպաստեն հասարակության՝ որպես ժողովրդավար մշակույթի կրողի ձևավորմանը:

Ժողովրդավար հասարակության հիմնական ցուցիչներից է հանդուրժողականությունը փոքրամասնություն կազմող խմբերի հանդեպ մի կողմից և պետության՝ որպես այդ խմբերի իրավունքների և ազատությունների երաշխավորի ընկալումը մյուս կողմից:

Ուստի ստորև բերված առաջարկությունները միտված են հանրության շրջանում

- **հանդուրժողական մշակույթի ձևավորմանը,**
- **պետության՝ որպես իրավունքների հիմնական երաշխավորի և պաշտպանի ընկալման ձևավորմանը,**

ինչպես նաև

- **օրենսդրական դաշտի բարելավմանը՝ իրավական դաշտում երաշխավորելու փոքրամասնություն կազմող խմբերի իրավունքների պաշտպանությունը:**

Առաջարկում ենք հետևյալ հիմնական գործողությունները, որոնք կնպաստեն հանդուրժողականության մթնոլորտի ձևավորմանը.

- **հակախտրական օրենսդրության ընդունում,**
- **հանրային իրազեկման միջոցառումների կազմակերպում:**

ՀԱՆՐԱՅԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Հանրային իրազեկման միջոցառումներ անհրաժեշտ է կազմակերպել միաժամանակ տարբեր մակարդակներում՝ ընդգրկելով տարբեր սեռատարիքային խմբերի:

Իրազեկման ծրագրերի հիմնական բովանդակությունը առնչվում է, սակայն չի սահմանափակվում հետևյալ թեմաներով.

- **մարդու իրավունքներ,**
- **հանդուրժողականություն,**
- **սեռականություն:**

Իրազեկման ծրագրեր **հանրային դպրոցներում**՝

- դպրոցական ծրագրերում ներառել հանդուրժողականությանը և սեռականությանն առնչվող դասաժամեր,
- դասաժամերը կազմակերպել համապատասխան նորագույն մեթոդների՝ հրավիրելով արտադպրոցական մասնագետների,
- հանրակրթական դպրոցների սաների համար մատչելի դարձնել հանդուրժողականության և սեռականության մասին ժամանակակից գրականությունը հայերեն լեզվով:

ԱՇԽԱՏԱՆՔ ԶԼՄ-ՆԵՐԻ ՀԵՏ

Քանի որ ԶԼՄ-ները հանդիսանում են անձի սեռականության մասին տեղեկատվության ձեռքբերման հիմնական աղբյուրը, ապա կարևոր է, որ առանձին աշխատանք տարվի ԶԼՄ-ների միջոցով ձևավորվող կարծրատիպերը անհրաժեշտ հունով ուղղորդելու համար, և նպատակային է ԶԼՄ-ները ակտիվորեն օգտագործել հասարակության իրազեկվածության բարձրացման համար: Մասնավորապես անհրաժեշտ է՝

- իրականացնել հեռուստամոնիտորինգ՝ վերհանելու հեռուստատեսության միջոցով տարածվող գենդերային և սեռականության վերաբերյալ հիմնական կարծրատիպերը,
- մշակել առաջարկություններ՝ ուղղված տեղական հեռուստաընկերություններին՝ վերանայելու ծրագրերում/հաղորդումներում առկա գենդերային հիմնահարցերին և սեռականությանն առնչվող կարծրատիպերը,
- խթանել նոր տեղեկատվական հաղորդումների հեռարձակումը, որոնք կլուսաբանեն սեռականությանն առնչվող ժամանակակից մոտեցումները: Մշակվող և իրականացվող հետագա կրթական ծրագրերում ներգրավել համապատասխան մասնագետների՝ բժիշկների, հոգեբանների, սոցիալական գիտությունների մասնագետների, ովքեր հանրությանը կիրազեկեն հանդուրժողականության և սեռականության ժամանակակից մոտեցումների մասին:

Անհրաժեշտ է, որ տեղական ՀԿ-ները և մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցները սեռականության շուրջ կարծրատիպերի կոտրման և իրազեկվածության բարձրացման նպատակով Հայաստանի լրագրողներին ակտիվորեն ներգրավեն մարդու իրավունքներին առնչվող ընթացիկ սեմինարներում/ուսումնական ծրագրերում և խրախուսեն նրանց կողմից մարդու իրավունքների և, մասնավորապես, սեռականության ու գենդերային հիմնախնդիրների լուսաբանումը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանվածությունը երաշխավորելու համար անհրաժեշտ է շահագրգիռ կողմերի սերտ համագործակցություն, որի արդյունքում կբարձրանա հասարակության տեղեկացվածության մակարդակը սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության, ինչպես նաև ԼԳԲՏ անձանց, նրանց հիմնախնդիրների և իրավունքների վերաբերյալ:



ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՀԱՐՑԱԹԵՐԹ N _____

Բարև Ձեզ: «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» հասարակական կազմակերպությունը «Սոցիոսկոպ» անկախ հետազոտական կենտրոնի հետ համատեղ անց է կացնում սոցիոլոգիական հետազոտություն՝ պարզելու մեր հանրության վերաբերմունքը սեռական փոքրամասնությունների նկատմամբ: Հարցումն անանուն է: Վերլուծության մեջ տվյալները ներկայացվելու են ընդհանրացված ձևով: Ձեր պատասխանները մեծապես կնպաստեն մեր աշխատանքին: Կանխավ շնորհակալություն:

I. Ներածություն

1. Ըստ Ձեզ, ինչպիսի՞ խոցելի խմբեր կան Հայաստանում:
   (ՆՇԵԼ բոլոր հնարավոր պատասխանները)

   1. Հաշմանդամություն ունեցող անձինք
   2. Սեռական փոքրամասնություններ
   3. Էթնիկ փոքրամասնություններ
   4. Երեխաներ
   5. Կանայք
   6. Ծերեր/թոշակառուներ
   66. Այլ _____
   99. Դժ. պատասխանել

II. Տեղեկացվածություն սեռական փոքրամասնությունների մասին

2. Ըստ Ձեզ, այսօր Հայաստանում կա՞ն արդյոք սեռական փոքրամասնություններ:

(Եթե հարցվողը չգիտի, թե ովքեր են սեռական փոքրամասնությունները, հուշել՝ օգտվելով հարցազրուցավարի ուղեցույցից):

1. Այո, շատ են
2. Այնքան էլ շատ չեն
3. Քիչ են
4. Ընդհանրապես չկան
99. Դժ. պատասխանել

3. Ըստ Ձեզ, սեռական փոքրամասնությունների կազմում հիմնականում ո՞ր սեռի ներկայացուցիչներն են:

1. Ավելի շատ տղամարդիկ
2. Ավելի շատ կանայք
3. Երկու սեռից էլ հավասարապես
99. Դժ. պատասխանել

4. Գիտե՞ք թե ինչ է.

	Այո	Ոչ	Դժ. պատասխանել
1. հոմոսեքսուալությունը	1	2	99
2. բիսեքսուալությունը	1	2	99
3. տրանսգենդերը	1	2	99

5. Դուք անձամբ ճանաչու՞մ եք, գիտե՞ք սեռական փոքրամասնությունների ներկայացուցիչների:
1. Այո
2. Ոչ (ԱՆՑՆԵԼ ՀԱՐՑ 7)
77. Գաղտնիք է (ԱՆՑՆԵԼ ՀԱՐՑ 7
99. Դժ. Պատասխանել (ԱՆՑՆԵԼ ՀԱՐՑ 7)

6. Եթե ճանաչում եք, գիտեք, ապա ո՞վ/ովքե՞ր է/են նա/նրանք.
(ԸՆԴՈՒՆԵԼ ամենամոտ հարաբերության պատասխանը)

1. Նա/նրանք իմ հարևանն/ներ է/են
2. Պարզապես ծանոթներ ենք
3. Միասին աշխատում ենք/սովորում ենք
4. Միևնույն բակից/թաղամասից ենք
5. Ընկերներ ենք
6. Բարեկամ ենք
7. Համաքաղաքացի է
8. Ես սեռական փոքրամասնության ներկայացուցիչ եմ (ՉԿԱՐԴԱԼ)
66. Այլ _____
77. Գաղտնիք է

7. Որտեղի՞ց եք տեղեկատվություն ստանում սեռական փոքրամասնությունների մասին:
(ԸՆԴՈՒՆԵԼ առավելագույնը 3 տարբերակ):

1. Հեռուստատեսություն (տեղեկատվական)
2. Հեռուստատեսություն (ժամանցային)
3. Ինտերնետից (լրատվական)
4. Ինտերնետից (ժամանցային/սոցիալական ցանցեր)
5. Տպագիր մամուլ (տեղեկատվական)
6. Տպագիր մամուլ(ժամանցային)
7. Հարևան/ծանոթ/ընկեր
8. Աշխատակիցներ
9. Հասարակական կազմակերպություն
10. Ոչ մի տեղից
66. Այլ _____
77.Գաղտնիք է
99.ԴԺ. պատասխանել

8. Գիտե՞ք արդյոք որևէ կազմակերպություն, որը զբաղվում է սեռական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությամբ:

   1. Այո _____(ՆՇԵԼ՝ կոնկրետ որն է)
   2. Ոչ
   77. Գաղտնիք է
   99. Դժ. պատասխանել

9. Գիտե՞ք արդյոք կազմակերպություն, որ պայքարում է սեռական փոքրամասնությունների դեմ:

   1. Այո _____(ՆՇԵԼ՝ կոնկրետ որն է)
   2. Ոչ
   77. Գաղտնիք է
   99. Դժ. պատասխանել

10. Ի՞նչ է անում պետությունը սեռական փոքրամասնությունների հանդեպ իր քաղաքականության մեջ:

   1. Ոչինչ չի անում
   2. Պաշտպանում է նրանց իրավունքները՝ խախտվելու դեպքում
   3. Ոտնահարում է նրանց իրավունքները
   4. Պայքարում է նրանց դեմ
   66. Այլ _____
   99. Դժ. Պատասխանել

11. Ի՞նչ պետք է անի պետությունը սեռական փոքրամասնությունների հանդեպ իր քաղաքականության մեջ:

   1. Ոչինչ չպետք է անի
   2. Պայքարի նրանց դեմ

3. Պաշտպանի նրանց իրավունքները՝ խախտվելու դեպքում
4. Մշակի սեռական փոքրամասնությունների մասին հասարակական գիտակցության բարձրացման, բնակչությանն իրազեկելու ծրագրեր (ՉԿԱՐԴԱԼ)
5. Բուժի (ՉԿԱՐԴԱԼ)
66. Այլ _____
99. Դժ. պատասխանել

12. Ի՞նչպես են ներկայացնում ՁԼՄ-ները սեռական փոքրամասնություններին:

1. Խրախուսում, քարոզում են երևույթը
2. Չեզոք կողմից են ներկայացնում
3. Հակաքարոզչություն են վարում նրանց հանդեպ
4. Առհասարակ չեն լուսաբանում
5. Տեղյակ չէ
66. Այլ _____
99. Դժ. Պատասխանել

III. Վերաբերմունք/դիրքորոշում սեռական փոքրամասնությունների հանդեպ

13. Ինչպիսի՞ հատկանիշներով կբնութագրեք սեռական փոքրամասնության ներկայացուցչին, եթե նա
(Յուրաքանչյուրի դեպքում նշել առավելագույնը 5 բնութագրիչ)

Կին է	Տղամարդ է
1.	1.
2.	2.
3.	3.
4.	4.
5.	5.

14. Ըստ Ձեզ սեռական փոքրամասնությունները/սեռական փոքրամասնության ներկայացուցիչները…
(ՇԱՐՈՒՆԱԿԵԼ միտքը՝ ընտրելով ներքոնշյալ հակադիր դատողություններից որևէ մեկը)

1.	1. Տարօրինակ մարդիկ են	2. Սովորական մարդիկ են	99. Դժ.պատ
2.	1. Այդպիսին են ծնվում	2. Դաստիարակության հետևանք է	99. Դժ.պատ
3.	1. Սեռական փոքրամասնության ներկայացուցիչ լինելը նորմալ երևույթ է	2. Սեռական փոքրամասնության ներկայացուցիչ լինելը շեղում է	99. Դժ.պատ

15. Ըստ Ձեզ, ինչո՞վ է առավելապես պայմանավորված մարդ-կանց՝ ոչ ավանդական սեռական կողմնորոշում ունենալը (ԸՆՏՐԵԼ 3 հիմնական տարբերակ)

1. Հիվանդություն է
2. Ձեռքբերովի է
3. Դաստիարակության արդյունք է
4. Նոր բարքերի, ազատության քարոզչության արդյունք է
5. Մոդա է
6. Ժամանակակից պայմաններում ինտերնետով շփման արդյունք է
7. Արևմտյան երկրների բացասական ազդեցության հետևանքն է
8. Այդկերպ նրանք փորձում են տարբերվել/ուշադրություն գրավել
9. Մարդկանց հանդուրժող վերաբերմունքի արդյունքն է
10. Ցանկացած մարդու իրավունքն է՝ ազատորեն տնօրինելու իր անձնական կյանքը
11. Աստծո պատիժ է

12. Բնությունն է այդպես ստեղծել
13. Հորմոնների և քրոմոսոմների թվով է պայմանավորված/գենետիկա
14. Կախված է ծնողների առողջական վիճակից
15. Գիտության մեջ վերջնական բացատրություն չկա
66. Այլ _____
99. ԴԺ. Պատասխանել

16. Կշփվե՞ք արդյոք սեռական փոքրամասնության ներկայացուցչի հետ, եթե նա Ձեր
(Եթե նույնիսկ պատասխաններից որեվէ մեկը ՈՉ է, ապա հարցնել ՀԱՐՑ 17-ը, եթե բոլոր պատասխանները ԱՅՈ են, ապա հարցնել ՀԱՐՑ 18-ը)

	Այո	Ոչ	ԴԺ. պատ
1.Ընկերն է	1 →հարց 18	2	99
2. Բարեկամն է	1 →հարց 18	2	99
3. Միևնույն թաղամասի բնակիչ է	1 →հարց 18	2	99
4. Աշխատակից է, համակուրսեցի է	1 →հարց 18	2	99
5. Համաքաղաքացին է	1 →հարց 18	2	99
6. Հայաստան եկած տուրիստ է	1 →հարց 18	2	99

17. Ես պատրաստ չեմ որևէ շփում ունենալ սեռական փոքրամասնության ներկայացուցչի հետ, քանի որ
(ԸՆՏՐԵԼ թվարկված դատողություններից որևէ մեկը)

1. Բացասական եմ վերաբերվում նրանց
2. Անհանգստանում եմ, թե ինչ կմտածի իմ շրջապատը իմ մասին
3. Կարծում եմ, որ սեռական փոքրամասնության ներկայացուցիչ լինելը դատապարտելի է

4. Փորձում եմ դրանով այնպես անել, որ այդ երևույթը չտարածվի
66. Այլ _____
99. Դժ. պատասխանել

18. Ինչպե՞ս կվարվեք, եթե սեռական փոքրամասնության ներկայացուցիչը

1.	Առողջական առումով հանկարծակի վատ զգա և դիմի Ձեր օգնությանը	
2.	Դիմի Ձեզ փողոցում որևէ հասցե ճշտելու համար	
3.	Դիմի Ձեզ՝ Ձեր հեռախոսով զանգելու խնդրանքով	
4.	Պարտքով գումար խնդրի՝ խոստացված ժամանակում անպայման վերադարձնելու պայմանով	

1. Կխուսափեմ արձագանքել
2. Կմերժեմ նրան
3. Ինքս խնդիրներ կստեղծեմ նրա համար
4. Հնարավոր է, որ կօգնեմ
5. Հնարավորության դեպքում միանշանակ կօգնեմ
66. Այլ .....
77. Գաղտնիք է
99. Դժ. պատասխանել

19. Ինչպե՞ս կվարվեք, եթե իմանաք, որ Ձեր ծանոթը/ընկերը/բարեկամը սեռական փոքրամասնության ներկայացուցիչ է:

1. Կդադարեցնեմ շփումը նրա հետ
2. Կշարունակեմ շփվել այնպես, ինչպես նախկինում էի շփվում
3. Կշարունակեմ շփումը, սակայն այն ավելի դրական կլինի

4. Կշարունակեմ շփումը, սակայն այն արդեն բացասական կլինի
5. Կփորձեմ ազդել նրա վրա, որպեսզի փոխի իր սեռական կողմնորոշումը
66. Այլ _____
77. Գաղտնիք է
99. Դժ. պատասխանել

20. Երբ փողոցում պատահաբար հանդիպեք սեռական փոքրամասնության ներկայացուցչի, ինչպե՞ս կվարվեք:

1. Անտարբեր կանցնեմ
2. Ֆիզիկական բռնություն կկիրառեմ (Եթե հարցվողը պատասխանում է, որ կծեծի, կխփի, կսպանի ընդունել որպես բռնության դրսևորում)
3. Ռեպլիկ կթողնեմ
4. Կհայհոյեմ
5. Հեգնական վերաբերմունք կցուցաբերեմ
6. Կծիծաղեմ նրա վրա/կծաղրեմ
7. Ինչպե՞ս եմ իմանալու սեռական փոքրամասնության ներկայացուցիչէ, թե՞ ոչ(ՉԿԱՐԴԱԼ)
66. Այլ _____
77. Գաղտնիք է
99. Դժ.պատասխանել

21. Ինչպե՞ս կվարվեք, եթե տեսնեք, որ բռնության են ենթարկում սեռական փոքրամասնության

1.	Կին ներկայացուցչին	
2.	Տղամարդ ներկայացուցչին	

1. Անտարբեր կանցնեմ, կգնամ, բայց կմտածեմ, որ ճիշտ են վարվում
2. Անտարբեր կանցնեմ, կգնամ, բայց կմտածեմ, որ սխալ են վարվում
3. Կզանգահարեմ իրավապահ մարմիններին
4. Կմոտենամ և կփորձեմ օգնել
5. Կմիանամ բռնություն կիրառողներին

66. Այլ _____

77. Գաղտնիք է

99. Դժ. Պատասխանել

22. Կօգտվե՞ք այն սպասքից, որով նախկինում օգտվել է սեռական փոքրամասնության ներկայացուցիչը:

1. Այո
2. Ոչ

77. Գաղտնիք է

99. Դժ. Պատասխանել

23. Անդրադառնանք սեռական փոքրամասնությունների իրավունքներին: Ընտրեք, խնդրում եմ թվարկված 2 հակադիր դատողություններից որևէ մեկը:

1.	1. Սեռական փոքրամասնությունները չունեն նույն իրավունքները, ինչ մյուսները:	2. Սեռական փոքրամասնությունները ունեն նույն իրավունքները, ինչ մյուսները:	99. Դժ. պատաս-խանել
2.	1.Սեռական փոքրամասնությունների իրավունքները պետք է ոտնահարվեն:	2.Սեռական փոքրամասնությունների իրավունքները պետք է հավասարապես պաշտպանվեն:	99. Դժ. պատաս-խանել

24. Ընտրեք, խնդրում եմ, թվարկված դատողություններից որևէ մեկը:

1.	1.Սեռական փոքրամասնության ներկայացուցիչ լինելը հարիր չէ հայ ազգին:	2. Սեռական փոքրա-մասնության ներկայա-ցուցիչ լինելը կապված չէ ազգության հետ:	99. Դժ. պատաս-խանել
2.	1. Հասարակությունը պետք է դատապարտի սեռական փոքրամասնու-թյուններին:	2. Հասարակությունը պետք է հանդուրժող լինի նրանց նկատմամբ:	99. Դժ. պատաս-խանել

IV. Հարցվողների ընդհանուր տվյալները

25. Սեռ

1. Արական
2. Իգական

26. Տարիք

1. 18-29
2. 30-39
3. 40-49
4. 50-64
5. 65 և ավելի

27. Կրթություն

1. Միջնակարգ/թերի միջնակարգ
2. Միջին մասնագիտական
3. Թերի բարձրագույն (պետական բուհ)
4. Թերի բարձրագույն (մասնավոր բուհ)

5. Բարձրագույն (պետական բուհ)
6. Բարձրագույն (մասնավոր բուհ)

28. Զբաղվածություն

1. Պետական կառավարման ոլորտի աշխատող
2. Պետական հիմնարկի աշխատող
3. Մասնավոր ոլորտի աշխատող
4. Ձեռնարկատեր/անհատ ձեռներեց
5. Հասարակական սեկտորի աշխատող
6. Ձինծառայող
7. Ուսանող
8. Գործազուրկ
9. Տնային տնտես/ուհի
10. Թոշակառու
66. Այլ _____

29. Քաղաք

1. Երևան
2. Գյումրի
3. Վանաձոր

Հասցե		Հարցման օրը	
Հեռախոս		Հարցազրույցի տևողությունը	_____ րոպե

Հարցազրուցավար	
Կոդավորող	
Մուտքագրող	

ՀԱՎԵԼՎԱԾ 2

Հրահանգներ հարցազրուցավարին

Հասցեն, փողոցը, բնակարանը ընտրելիս առաջնորդվել ներքոնշյալ քայլերով.

Քայլ առաջին. սկզբնակետի, մայթի, ուղղության որոշում

Որոշեք Ձեր սկզբնակետը, փողոցի անհրաժեշտ մայթը և ուղղությունը, որով պետք է շարժվեք:

Դեպք 1. Ձեզ տրված է ճշգրիտ հասցեն

Ձեզանից պահանջվում է գտնել հանձնարարված հասցեն: Կանգնեք հանձնարարված սկզբնակետում՝ դեմքով դեպի փողոցի վերջը: Այնուհետև ընտրեք փողոցի այն մայթը, որը Ձեզանից աջ է և շարժվեք այդ մայթով դեպի փողոցի վերջը:

Դեպք 2. Ձեզ տրված է փողոցի անունը

Այս դեպքում Դուք գտնում եք փողոցի սկիզբը (օրինակ՝ Թամանյան 1) և դա կլինի Ձեր սկզբնակետը: Այնուհետև կանգնեք սկզբնակետում՝ դեմքով դեպի փողոցի վերջը: Ընտրելով Ձեր աջ կողմում գտնվող մայթը՝ շարժվեք դեպի փողոցի վերջը:

Դեպք 3. Քարտեզի վրա կետ, որը փողոցների հատման կետ է (օրինակ, Թամանյան- Իսահակյան փողոցների հատման կետ)

Այս դեպքում Դուք նախ պետք է ընտրեք այն փողոցը, որը Ձեզ անհրաժեշտ է: Միշտ ընտրեք այն փողոցը, որի անվան սկզբնատառը այբուբենում ավելի ետ է գտնվում: Այնուհետև կանգնեք դեմքով դեպի փողոցի վերջը, ընտրեք Ձեզանից աջ գտնվող մայթը և շարժվեք դեպի փողոցի վերջը:

Դեպք 4. Շինություն

Այս դեպքում Դուք նախ պետք է գտնեք նշված շինության հասցեն: Եթե Դուք պարզեցիք այն փողոցը, որի վրա գտնվում է տվյալ շինությունը, ապա շարունակեք գնալ այդ ուղղությամբ: Սկզբնակետը կլինի տվյալ շինությունը:

Քայլ երկրորդ. ինչպես ընտրել բնակելի միավորը

Հիմնական սկզբունքը փողոցի աջ կողմի և յուրաքանչյուր երրորդ բնակելի միավորի ընտրության կանոնի պահպանման մեջ է: Սկզբնական հասցեն որոշելուց հետո Դուք պետք է անեք հետևյալը:
Գտնում եք սկզբնակետի 3-րդ դուռը, այնուհետև սկսում եք շարժվել փողոցի աջ մայթով՝ փորձելով մտնել յուրաքանչյուր երրորդ բնակելի միավորը: Եթե հասնեք խաչմերուկի, մնացեք աջ կողմում և շարունակեք փնտրել:
Քիչ հավանական է, բայց հնարավոր է, որ Դուք փորձեք բոլոր հնարավոր ճանապարհները, բայց այդպես էլ չլրացնեք Ձեր քվոտան: Այս դեպքում կրկին անցեք Ձեր երթուղիով՝ այս անգամ ընտրելով առաջին բնակելի միավորը, իսկ այնուհետև յուրաքանչյուր երրորդը: Եթե դա էլ չօգնի, դիմեք Ձեր ղեկավարին՝ նոր սկզբնակետ ստանալու համար:
Երբեք չշրջվեք ձախ և չքայլեք փողոցի ձախ մայթով: Եթե նույնիսկ աջ մայթին տներ չկան, իսկ հակառակ մայթին դրանք շատ են, Դուք չպետք է փոխեք փողոցի մայթը:
Միայն այն բացառությամբ, երբ Դուք հանդիպում եք փակուղու, կարող եք անցնել փողոցի մյուս մայթը և ետ գնալ: Այնուհետև շրջվեք աջ և շարունակեք Ձեր երթուղին այն մայթով, որի վրա Դուք ի սկզբանե եղել եք:

Քայլ երրորդ. գտնել առաջին բնակարանը

Հաջորդ խնդիրը անհրաժեշտ բնակարանը (մուտքի դուռը) գտնելն է: Դրա համար Ձեզ թիվ է հարկավոր, և դա 3-ն է, որն էական դեր կխաղա ընտրության գործում: Այժմ Դուք պետք է շարժվեք

անհրաժեշտ ուղղությամբ և գտնեք փողոցի աջ մայթի վրա գտնվող 3-րդ դուռը (բնակարանը):
Դուռ ասելով ինկատի ունենք բնակելի միավորի դեպի փողոց դուրս եկող ցանկացած մուտք: Եթե Ձեզ հանդիպել է շենք, որն ունի մեկից ավելի հարկեր, կամ 2 և ավել բնակարաններ, դրանցից յուրաքանչյուրը պետք է հաշվվի առանձին: Բացի այդ պետք է նկատի ունենալ, որ միայն բնակելի շենքերի դռները/բնակարանները պետք է հաշվվեն: Այն դեպքում, եթե Ձեր սկզբնակետը բնակելի շենքի դուռ է, ապա Դուք հաշվում եք երրորդ դուռը/բնակարանը:
Դռները/բնակարանները հաշվելիս պետք է հետևել փողոցի աջ մայթի կանոնին: Եթե Ձեր հանձնարարված սկզբնակետը գնտվում է փողոցի ձախ մայթին/օրինակ, Թամանյան 4/, ապա Դուք պետք է անցնեք փողոցի աջ մայթը և կանգնեք դեմքով դեպի փողոցի վերջը/օրինակ, կգտնվեք Թամանյան 3-ում/: Եթե Թամանյան 4-ը բնակելի է, ապա Թամանյան 3-ը կլինի Ձեր 2-րդ դուռը, իսկ եթե բնակելի չէ, ապա կլինի 1-ին դուռը:
Հաջորդ քայլը ճիշտ բնակելի միավոր ընտրելն է: Օֆիսները, կազմակերպությունները չեն համարվում բնակելի միավոր:

Ինչպես ընտրել բնակարանը բազմահարկ բնակելի շենքում

Բարձրացեք շենքի վերին հարկը: Մոտեցեք վերելակին առավել մոտ գտնվող բնակարանին և փորձեք բախել հարկում գտնվող 3-րդ դուռը՝ ժամսլաքի ուղղությամբ: Եթե հարկում ընդամենը 2 բնակարան է, որոնք հավասարապես մոտ են վերելակին, ընտրեք Ձեզանից աջ գտնվողը:

Քայլ Չորրորդ. հարցվողների ընտրություն

Աշխատանքային օրերին հարցումը սկսել 16.00-17.00 ժամերից ոչ շուտ, իսկ հանգստյան օրերին՝առավոտյան ժամը 10.30–11.00 ից: Դուռը բացելուց հետո զրուցեք ընտանիքի այն անդամի հետ, որն առնվազն 18 տարեկան է: Համոզվեք, որ նա համապատասխանում է քվոտային թերթիկում նշված տարիքին և սեռին: Եթե ընտանիքում

կլինեն այդ նույն չափանիշներին համապատասխան այլ անդամներ, ապա հարցումն անցկացրեք նրա հետ, ում ծննդյան օրն ամենամոտն է հարցման պահին:
Ձեր հարցվողը պետք է լինի.

- 18 տարեկանից բարձր
- ՀՀ քաղաքացի, այդ ընտանիքի մշտական բնակիչ
- Միակ անդամը, ում հետ հարցազրույց է արվում: Եթե հարցման ժամանակ բացի ռեսպոնդենտից հարցերին կփորձեն պատասխանել նաև ընտանիքի մյուս անդամները, և եթե ոչ մի կերպ հնարավոր չլինի ստանալ միայն ընտրված հարցվողի պատասխանը, ապա դադարեցնել հարցազրույցը
- Ընտանիքի այն անդամը, ում ծննդյան օրն ամենամոտն է

<u>Ինչպես լրացնել երթուղային թերթիկը</u>

Փորձ N	Հասցե	Այցելություններ	Այցելության օրը	Այցելության ժամը	1.ապրում են 2. չեն ապրում	1.տանը մարդ կա 2. չկա	1.Հարցվողը տանն է 2. տանը չէ	1.Հարցվողը մասնակցեց 2.չմասնակցեց	Եթե մերժել է 1. Դեմ է բացահայտ թեմային 2. Դեմ է, սակայն այլ հիմնավորում է բերում 3. Դեմ է այլ պատճառով
1.		1–ին							

Համարակալեք փորձն ըստ հերթականության: Գրանցեք այցելության ամսաթիվն ու ժամը, հասցեն: Յուրաքանչյուր սյունակում լրացրեք համապատասխան կոդը:
Հնարավոր է այցելության 3 փորձ նույն օրը՝ ավելի ուշ: Կրկնակի այցելությունը թույլատրվում է առաջին այցելությունից 1 ժամ հետո:

Հարցաթերթը լրացնելիս պետք է հաշվի առնել հետևյալ կետերը.

1. Մինչև հարցման գնալը նախապես լավ ծանոթացեք հարցաթերթին:
2. Հարցաթերթը լրացրեք խնամքով՝ հասկանալի ձեռագրով և առավելագույնս առանց ջնջումների:
3. Հարցաթերթը լրացրեք միայն սև կամ կապույտ գրիչներով՝ խուսափեք մատիտից:
4. Հարցերի պատասխանները վերցրեք միմիայն շրջանակի մեջ այնպես, որ հասկանալի լինի, թե շրջանակը որ պատասխանին է վերաբերում:
5. Հարցաթերթը ոչ մի դեպքում ցույց մի տվեք հարցվողին:
6. Հետևեք հարցաթերթի բոլոր ցուցումներին:
7. Հարցերը տվեք այնպես, ինչպես դրանք ձևակերպված են հարցաթերթում, և խուսափեք հարցի վերաձևակերպումներից:
8. Այն դեպքերում, երբ հարցից հետո նշված չէ, թե քանի պատասխան պետք է ընդունել, նման դեպքերում ընդունեք միմիայն մեկ պատասխան:
9. «Գաղտնիք է» և «Դժվարանում եմ պատասխանել» տարբերակները բարձրաձայն մի կարդացեք:
10. Ուշադրություն դարձրեք և հետևեք անցումներին:

Սույն հրապարակումը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող Քաղաքացիական շահերի պաշտպանության աջակցության ծրագրի, և Ամերիկայի Միացյալ Նահանգների բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության No 111-A-00-04-00056-00 համագործակցության պայմանագրի շրջանակներում «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետերը և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի պատասխանատվության տակ, և հնարավոր է, որ չհամընկնեն Քաունթերփարթ ինթերնեշնլի Հայաստանյան ներկայացուցչության, ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության և ԱՄՆ կառավարության տեսակետերի հետ:

Տպագրվել է «Մենք և մեր իրավունքները» ծրագրի շրջանակներում Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում «Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոնի կողմից կատարված քանակական հետազոտության արդյունքների հիման վրա:

© 2011 «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ
www.pinkarmenia.org